Պարույր Սևակ

Խաբկանք

Իրիկունն է իջնում: Արևը հանգչում է,
Գիշերվա մութ շունչն է խստանում:
Մթան հետ գալիս ես, հայացքով կանչում ես
Եվ վայելք ու սեր ես խոստանում:
Լույսերը վառվում են: Դու լույսը մարում ես
(Ուզում ես, որ նստենք մթան մեջ),
Մերթ տալիս անունը, մերթ կրկին լռում ես,
Տիրաբար շրջում ես իմ տան մեջ:
Գալիս է գիշերը: Փակում եմ փեղկերը
(Չմրսես գիշերվա պաղ հովում):
Կարծես թե մեր հանդեպ իր գործած մեղքերը
Ջղջալով՝ ինքը կյանքն է քավում...
Չէ՛, սո՛ւտ է. մենա՛կ եմ, առա՛նց քեզ, առանձի՛ն,
Եվ այս էլ խաբկանք է մի ոսկե,
Որով դու խաբվելով ապրում ես առանց ինձ,
Եվ ես էլ... չեմ մեռնում առանց քեզ: